# ԿԼՈՐ ՍԵՂԱՆ - ՔՆՆԱՐԿՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԵՏ

21.11.2025 09:18

Այսօր՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների կլոր սեղան-քննարկում:

Քննարկման շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը առաջարկել է Փաստաբանների պալատի կազմում ստեղծել փաստաբանական գրասենյակների զարգացմանը և ընթացիկ խնդիրների լուծմանը աջակցող Փաստաբանական գրասենյակների միություն:

Գործընկերներին ներկայացվել է նախաձեռնության անհրաժեշտությունն ու նպատակը՝ հաշվի առնելով այսպիսի հարթակ ունենալու պահանջարկը և արդիականությունը:

Փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչները ողջունել են նախաձեռնությունը և հանդես եկել արդյունավետ առաջարկներով ու մտահաղացումներով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև փաստաբանական գրասենյակների EXPO ցուցահանդես կազմակերպելու, փաստաբանական գրասենյակի աշխատանքների էլեկտրոնային կառավարման հարթակ  մշակելու և այլ առանցքային հարցեր:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })